

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/12

2 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ԱՐԳՈ» ՍՊԸ 13.11.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը 2013 և 2014 թ.թ.-ին հարկման ընդհանուր դաշտում գործունեություն իրականացնելու վերաբերյալ:

«ԱՐԳՈ» ՍՊԸ դիմումում բերված փաստարկները.

Ս.թ. օգոստոսի 5-ին գանգատարկման հանձնաժողովի նիստում քննվել է «ԱՐԳՈ» ՍՊԸ-ի գանգատը 2013 և 2014 թ.թ.-ի ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ, որի արդյունքում ստացվել է թիվ 11/4 որոշումը:

Որոշման ստանալուց հետո «ԱՐԳՈ» ՍՊԸ-ում կատարած վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ կազմակերպության գործունեության մասին գանգատարկման հանձնաժողովին ներկայացած տվյալները թերի են, մասնավորապես՝ կազմակերպությունը 2012 և 2013 թ.թ.-ին իրականացրել է կերի և արդյունաբերական վերամշակում անցած թռչնամսի վաճառք, որոնք չեն համարվում գյուղատնտեսական արտադրանք (կից ներկայացվում են բեռնագրերի և դրամարկղի պայմանագրերի, մուտքի օրդերների և հարկային հաշվի օրինակները): Այսինքն, 2012 և 2013 թ.թ.-ին կազմակերպությունը չի զբաղվել բացառապես գյուղատնտեսությամբ:

Ի հայտ եկած լրացուցիչ փաստերի հետ կապված «ԱՐԳՈ» ՍՊԸ-ն խնդրում է գանգատարկման հանձնաժողովին կրկին անգամ վերանայել 2013 և 2014 թ.թ.-ին հարկման ընդհանուր դաշտում աշխատելու վերաբերյալ հարցը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հանձնաժողովի 05.08.2014 թ-ի նիստում քննության է առնվել «ԱՐԳՈ» ՍՊԸ (այսուհետ նաև կազմակերպություն) 22.07.2014 թ-ի գանգատը 2013 և 2014 թ.թ.-ի ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ: Արդյունքում ընդունվել է թիվ 11/4 որոշումը, որի համաձայն կազմակերպության գանգատը մերժվել է: Մասնավորապես, թիվ 11/4 որոշման համաձայն ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունը հանդիսացել է բացառապես գյուղատնտեսական արտադրանք արտադրող (բացի գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունից չի իրականացնում այլ գործունեություն), ուստի ընկերությունը օրացուցային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող կարող էր համարվել ԱԱՀ-ի շեմը գերազանցելու պահից մինչև օրացուցային տարվա ավարտը:

«ԱՐԳՈ» ՍՊԸ 13.11.2014 թ-ի դիմումով բերված ապացույցների (բեռնագրեր, հարկային հաշիվներ) ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ 2012 և 2013 թ.թ.-ին կազմակերպությունը չի հանդիսացել բացառապես գյուղատնտեսական արտադրանք արտադրող, քանի որ նշված ժամանակահատվածում իրականացվել է կերի և արդյունաբերական վերամշակում անցած թռչնամսի վաճառք, որոնք գյուղատնտեսական արտադրանք չեն համարվում: Մասնավորապես, «ԱՐԳՈ» ՍՊԸ և Գրիգոր Սեդրակյանի միջև 27.02.2012 թ-ին կնքված թիվ 2 մատակարարման պայմանագրի համաձայն 02.08.2012 թ-ի թիվ 102 հարկային հաշվով կազմակերպության կողմից մատակարարվել է 381.000 դրամի մայրական հավ և հավի կեր: «ԱՐԳՈ» ՍՊԸ և Հովհաննես Անտիլյանի միջև 01.02.2012 թ-ին կնքված թիվ 03 մատակարարման պայմանագրի համաձայն 19.06.2013 թ-ի թիվ 082 հարկային հաշվով կազմակերպության կողմից մատակարարվել է 121.000 դրամի հավի կեր:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ «ԱՐԳՈ» ՍՊԸ միջնորդությունը՝ Հանձնաժողովի թիվ 11/4 որոշումը վերանայելու և 2013 և 2014 թ.թ.-ին կազմակերպությանը հարկման ընդհանուր դաշտում գործունեություն իրականացնող համարելու վերաբերյալ, ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

«ԱՐԳՈ» ՍՊԸ 13.11.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը՝ 2013 և 2014 թ.թ.-ին հարկման ընդհանուր դաշտում գործունեություն իրականացնող համարելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ